ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանի՝ 2017թ. հոկտեմբերի 16-18-ը Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ՝

Էրիկ Գրիգորյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ՝

ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ՝

Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա)

2017թ. հոկտեմբերի 16-18-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության գրասենյակ

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

Մասնակցություն «Բնապահպանական մարտահրավերների և անվտանգության շուրջ իրազեկման բարձրացում» խորագրով երրորդ նիստին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ՝

«Բնապահպանական մարտահրավերների և անվտանգության շուրջ իրազեկման բարձրացում» խորոգրով նիստում նշել եմ տնտեսական որոշումներում բնապահպանական բաղադրիչի կարևորության մասին, ինչպես նաև կարևորել բնապահպանական ծրագրերում սոցիալական և տնտեսական իրականության համադրումը:

Նիստի ժամանակ ներկայացվել է Հայաստանում բնապահպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները, մասնա-վորապես՝ հանքարդյունաբերության, ՓՀԷԿ-երի, շրջակա միջավայրի մոնիթորինգի, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և բնապահպանական

վճարների ոլորտներում, որոնք ուղղված են շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանը:

Հանրության իրազեկվածության բարձրացման համատեքստում ներկայացրել եմ արդյունաբերության ճյուղերի թափանցիկության հայաստանյան նախաձեռնության մասին, e-draft.am կայքի, սոցիալական ցանցերի և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և հայաստանյան Օրհուս կենտրոնների աշխատանքի մասին:

Կարևորելով համագործակցությունը ոչ միայն ազգային, այլ նաև տարածաշրջանային և միջազգային մակարդակներում՝ իմ կողմից ներկայացվել է ՀՀ միջազգային համաձայնագրերը և Հայաստանում իրականացվող ծրագրերը:

<u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝</u>

Հաշվի առնելով, որ բնապահպանական հարցերը շաղկապված են մարդկանց կյանքի որակի, սոցիալական և տնտեսական իրականությունների հետ՝ իմ կողմից առաջարկվել է ընդունել, որ աղքատությունը հանդիսանում է բնապահպանական ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը՝ ընդգծելով, որ աղքատության նվազեցումը էական ազդեցություն կարող է ունենալ բնապահպանական խնդիրների լուծման գործում:

ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ՝ Էրիկ Գրիգորյան